

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ

### I

Նոր նիւթեր Միք. Նալբանդեանցի կենսագրութեան  
համար.—Նրգիծաքանական ոտանաւոր.—Նամակ Կալ-  
կաթայից:—Քարտէզ հրատարակելու հարցը:—Ինչպէս  
են տարածում հայերէն գրքերը:—Մ. Նալբանդեանցի  
հիանդութիւնը եւ թժ. Սուլթանշահի տուած վկայականը:

Իմ հանգուցեալ մօրեղբայր բժիշկ Անանիա Սուլ-  
թանշահից, նորա մահից մի քանի ամիս առաջ, ստա-  
ցել եմ ես մի քանի հետաքրքրական նամակներ և թղթ-  
թեր: Իրանց մէջ առաջին տեղը բռնում են Միք. Նալ-  
բանդեանցի նամակները: Գալ անգամուայ թողնելով  
ծանօթացնել ընթերցողին Մ. Նալբանդեանի Պետեր-  
բուրգի բանտից գրած նամակների հետ, այս անգամ ես  
մէջ կբերեմ նորա երկու ուրիշ նամակները և Նալբան-  
դեանին վերաբերեալ մի թուղթ: Ի միջի այլոց ասեմ,  
որ թժ. Սուլթանշահի ինչ լանձնած թղթերի մէջ կայ  
և մի ոտանաւոր, որը գրել է Միք. Նալբանդեանցը  
1856 թէ 1857 թ., այսինքն իւր նոր Մոսկուա եկած  
տարին: Դա մի ահագին ոտանաւոր է «Ны хорощо»  
վերնագրով, բաւականին թույլ, համեմած բազմաթիւ  
ուսերէն նախադասութիւններով, բառախտորով և այլն:  
Հանգուցեալ բժիշկի ինչ գրած նամակից երևում է, որ  
այդ ոտանաւորի մէջ խօսւում է Արտէմիյ Մակարիչ

Եզուլովի, Լազարեանները հին բարեկամի, նախկին սպայի և այն ժամանակուայ ճեմարանի տնտեսի մասին, որը Մոսկուայի հայոց եկեղեցիների երեցփոխն էր և յայտնի էր իբրև բռնակալ անձն: Ոտանաւորի մէջ դուրս բերուած միւս անձն է հանգուցեալ Յարութիւն քահանայ Կէօքչեանցը: «МОЛОДОЙ ЧЕЛОВЕКЪ»-ը ինքը՝ Նալբանդեանն է և այլն:

Ի նկատի առնելով, որ այդ ոտանաւորը ոչ գեղարուեստական նշանակութիւն ունի և ոչ էլ կենսագրական—բաւականանանք մէջ բերելով միմիայն նորա սկիզբը, մանաւանդ որ գրուած է շատ անհասկանալի ձևով և թուղթը, որի վրայ գրած է, ժամանակից մաշել է և պատառուել:

«Hy տէրտէր դու շատ եմք

«Բըս բըս բըս բըս խօսում ես

«Աղալ զազան չի սիրիլ

«Ահա ասում եմ ես քեզ

«Hy хорошо չես ուղում

«Hy դուզ ասա нехоту

«Что такое ничего

«Նա կզանի տէրտէրցու»: և այլն.

Ամբողջ ոտանաւորը այս տեսակ, մեզ համար անհասկանալի և մինչև իսկ անկապ, տողերից է կազմուած, մինչդեռ հեղինակի մօտ ընկերները բերան էին արել այդ «Hy хорошо»-ն և երկի տարածում էին բերնէ բերան «աղաներին» նեղացնելու մտքով: Այս ոտանաւորը մի անգամ ևս ցոյց է տալիս, որ Նալբանդեանցը սովորութիւն ունէր ընկնելու սրաւնրա հետ ու իւր սուր լեզուով սաստիկ հարուածներ տալու հակառակորդներին: Եւ այդ սուր լեզուի և գրչի պատճառովն էր, որ Մ. Նալբանդեանցի թշնամիները անպակաս էին:

Միւս թուղթը արդէն օրինաւոր նշանակութիւն ունի և ես մէջ կբերեմ այն ամբողջովին.

Յունիսի 26/8 Յունիսի 1861 Կալկաթա-  
Սիրելի եղբայր իմ

Ա. Սուլթան.

Մինչև այժմ չկարողացայ քեզ վերստին նամակ գրել, որպէս զի պայմանիս համաձայն քեզանից նամակ ստանալու իրաւունք ունենալի։ Ինչ և իցէ, ես գիտեմ, որ դու ինձ մոռացած չես ինչպէս ես քեզ Յրբ աւելի մօտենամ Ռուսիային, այսինքն երբ ոտք կոխեմ եւրոպական ցամաքահողի վերայ, այն ժամանակ կըզրեմ քեզ դարձեալ և պատասխան եւ կըպահանջեմ, բայց այժմ գրում եմ միայն, որ դու իմանաս թէ ես ողջմամբ մտայ Կալկաթա մայիսի 30/11 Յունիսի և երեւում է որ դեռ ես կըմնամ մի քանի ժամանակ։ Սուէզից մինչև այստեղ 24 օր ծովի վերայ էի. շատ մըրիկները եւ պատահեցի։ Կարմիր ծովից դուրս դալու ժամանակ, կանգնեցանք չորս ժամ Ադէն քաղաքի առջև. սա հին Քասսօբն է արաբական, որ երբեմն Սողոմոն շինեց և որ վերջումը նւթ եղաւ արաբական բանաստեղծներին. ի հարկէ լիշում ես Անթարը։

Քաղմորից գնացինք Յէլլօն կղզին, ուր երբեմն ճիգ վիթները գնացել էին, երբ այս դժոխային կարգը նոր էր հիմնվում։ Յէլլօնից Մադրաս, իսկ Մագրասից Կալկաթա։

Քործերս բաւական լաւ են դնում բայց դեռ աւարտվելու աստղը ծագած չէ հորիզոնում երևում է թէ ամիս և կէս կամ երկու ամիս դեռ եւ կըմնամ այստեղ։ Բայց վերադարձիս որ ճանապարհով կըդառնամ Ռուսիա Պօլսի վրայով թէ Լենդընի արդ կախվում է գործիս ընթացքից։

Առ այժմ այստեղի ծալրադուրս դատարանի մէջ (սուպրեմ կօրտ) երեք դատ ունիմ. Քո մարգարէութիւնը միշտ կատարվում է թէ ես պրօցեսսից ազատվելու չեմ. բայց վերջը լաջող է և Նախիջևանի մէջ մի հոլակապ դպրոց տեսանելու լուրը քաջալերում է ինձ և դօրացնում է իմ Ֆիզիկական թուլութիւնը պատճառված դժոխային շերմութիւնից։ Ռ. Չերմաչաիբ պտուղահանիս վերայ ցոյց է տալիս միշտ 48+ ցնծան։

Խնդրեմ ինձնից նամակ ստացածդ մարդու չասես, ըստ որում ալոց չեմ գրած, կըվիրաւորվին, լուս ունիմ որ իմ գէպի քեզ այս բարեկամութիւնը առիթ չըինես ուրիշների հետ անախորժ գրութեան մէջ մտանելու։

Արդեօք ինչ ես անում այժմ, ինչ վիճակի մէջ ես. մի չար հոգի ականջիս կարծես թէ ասում է, որ լուսահատ վիճակի մէջ լինես. համբերիր եղբայր եթէ ստուգ է այս խաւար գուշակութիւնը, համբերիր մինչև իմ գալը, անշուշտ մի գործ կըդանենք քանի ընկեր միասին մի կտոր հոց խաղաղութեամբ վայելելու համար։ Ամենեին ձեռնհաս չեմ շիւսխափալի համար աշխատելու. եղանակը, դատաստանական գրադար

մունքը և սլանդիստութեան դժնդակ ծանրութիւնը խլում են ինձանից իմ վերջին հնարները: Բայց դու աշխատիր գէթ մի հատ աղատամիտ բան թարգմանելու: Ինչնիցէ ալդ օրագիրը մեր թախըմի օւղանն է: Եւս ունեմ որ շուտով կրկատարես խնդիրքս: Նաղարեանցը կըսրբադրէ ալն չնչին թերութիւնքը, որ պիտի լինեն քո դրուածքում:

Ես լաջողութեամբ կըդառնամ, եթէ ծովը ևս լաջողէ:  
Մնաս բարեաւ ցքաղցր տեսութիւն:

Միշտ քո Մ. Նալբանդեան:

Ինչպէս տեսնում է ընթերցողը դա Միք. Նալբանդեանի Կալիաթայից դրած նամակն է: Որքան յայտնի է ինձ—դա միակն է, որ պահպանուել է մինչև այժմս և կենդանի կերպով ցոյց է տալիս ինչպիսի խոչնդոտների է յաղթել քաջարի հրասլարակախօսը: Մի նախիջևանցի, սրանից կէս դար առաջ, գնում է Կալիաթա և պաշտպանում է գրեթէ անյուսալի մի դատ: Միք. Նալբանդեանցի ալդ գործունէութիւնը, առանց կապելու նորա բերած արդիւնքի հետ, ինքն ըստ ինքեան մի վերին աստիճանի աչքի ընկնող երևոյթ է: Արտաքու կարգի դրոշմ է երևում ալդ մարդու ճակատի վերայ:

Միք. Նալբանդեանցի ճանասլարհորդութիւնը շատ քիչ է ուսումնասիրուած: Ալդ մասին Եր. Շահազիզի ժողոված տեղեկութիւններն էլ անբաւարար են: Այս նամակը ևս քիչ լոյս է սփռում: Գուցէ աւելի հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդէ մեզ Միք. Նալբանդեանցի ապագայ կենսագրող պ. Լէօն: Ես գոնէ խորհուրդ կտայի դիմել Միք. Նալբանդեանցի ժառանգներին պ. պ. Յարութիւն և Ղազարոս Նալբանդեանցներին և ստանալ նրանցից Միք. Նալբանդեանցի թղթերը: Ես աչքի եմ անցկացրել նրանց և յիշում եմ բազմաթիւ հետաքրքրական հաշիւներ, յիշատակարաններ, ծանօթութիւններ և այլն: Միք. Նալբանդեանցը մտադրութիւն ունէր, ինչպէս երևում է, մանրամասն հաշիւ տալ իր բոլոր տրած ճանասլարհորդական ծախքերի և ալդ նպատակով նա բերել է իր հետ, օրինակ,

Պահիրէի թէ Աղէքսանդրիայի մի հիւրանոցից ստացած՝ սենեակի, ճաշի, խմիչքի և սիգարի հաշիւը:

Միք. Նալբանդեանցը թէ իր յայտնած գաղափարներով, թէ իր խաղացած գլուխն-հասարակական դերով, թէ իր տաղանդի յատկութեամբ—մեծ տեղ է բռնում մեր մտաւոր կեանքի պատմութեան մէջ: Հայ հասարակութեանը, մանաւանդ ինտելիգենտ դասին ամօթ է ծանօթ չլինել մեր երևելի հրապարակախօսի կեանքի, գործունէութեան և գրուածքների հետ: Մինչդեռ մենք լիրաւի չգիտենք նրան: Այդպիսի անտարբերութեան կարելի է պատահել միմիայն մեր հայ հասարակութեան մէջ: Փնտրեցէք և տեսէք այդ տեսակ բան դուք կըգտնէք Ֆրանսիացիների, լեհացիների, ֆինլանդացիների, ռուսների մէջ. երբէք: Մի հաստ օրինակը հրապարակախօս ունենալ և նորա հետ ծանօթ չլինել... Տիճաղելի կլինէր, եթէ ամօթալի չլինէր:

Եւ միևնոյն ժամանակ մենք խօսք ու զրոյց ենք անում Միք. Նալբանդեանցին արձան կանգնեցնելու մասին: Կեղծաւորութիւն չէ՞ արդեօք այդ: Արձանի համար փող նուիրողները և հաւաքողները կարգացել են արդեօք այն մարդու գրուածքները, որին արձան են ուզում կանգնեցնել: Եւ թնչպէս կարգացած լինեն, եթէ Նալբանդեանցի գրուածքները երբէք առանձին գրքով լոյս տեսած չեն, իսկ հին «Հիւսիսափայլ»ներ չկան:

Թողնենք կեղծաւորութիւնը և անենք այն, ինչ որ վայել է՝ հրատարակենք Միք. Նալբանդեանցի ընտիր գրուածքները և տարածենք այն ժողովրդի մէջ, որ լամեն մարդ կարդայ—հասկանայ թէ ո՞վ էր Միք. Նալբանդեանցը և թնչ էր նա ուզում: Առանձնապէս լաւ գործ արած կլինենք եթէ հրատարակէինք Միք. Նալբանդեանցի կենսագրութիւնը և գինը 5—10 կոպ. նշանակելով ցրուենք ընթերցողների մէջ: Նախ ժողո-

վուրդը թող իմանայ, որ Միք. Նալբանդեանցը «մեծ-  
մարդ» էր, ապա նա կհանգնեցնէ և արձան նորօն: Իսկ  
առ այժմ բաւականանաք այն անշուք յուշարձանով,  
որ կայ Տրապարակախօսի գերեզմանի վերայ և որը գեռ-  
երկար տարիներ կգիմանայ և տանք ժողովրդի ձեռքը  
Միք. Նալբանդեանցի անձեռագործ արձանը:

Միք. Նալբանդեանցին արձան կանգնեցնելու միտ-  
քը լոյսեղ է Յակոբ Բողդանեանը, իսկ այդ գաղափա-  
րից օգտուել են ուրիշները, որոնք գուցէ և իրագոր-  
ծեն Յ. Բողդանեանի միտքը: Սակայն Բողդանեանի գա-  
ղափարը կարող է գեղեցիկ լինել ինքն ըստ ինքեան,  
բայց ոչ ժամանակին յայտնուած: Եւ մեր կարծիքով  
այժմ ժամանակ է ոչ թէ Նալբանդեանի արձանը  
կանգնեցնելու, այլ մանրամասն և մտաչելի կենսագրու-  
թիւնը գրելու և նորա գրուածքները Տրատարակելու:  
Եւ որովհետեւ մենք Տրատարակիչներ չունենք, որոնք  
կարողանային յանձն առնել այդ գործը—պէտք է գի-  
մել ժողովարարութեան: Ազգի յումայով կարելի կլինի  
ազգին ընծալելու մի գեղեցիկ ընծայ:

Երկրորդ նամակը, որը իմ մօտս է, և որը նոյն-  
պէս զետեղում եմ այստեղ, գրել է Միք. Նալբան-  
դեանցը Ս. Պետերբուրգից, 1862 թ., յունիսի 20-ին:  
Միք. Նալբանդեանը այդ ժամանակ նոր էր վերադար-  
ձել արտասահմանից և զբողուած էր ի միջի այլոց  
Հայաստանի քարտէզը Տրատարակելու մտքով: Այդ  
Տրատարակութիւնը տեղի չունեցաւ, որովհետեւ վրայ  
հասաւ ձերբակալութիւնը և երբ Միք. Նալբանդեանը  
բերդից դուրս եկաւ՝ արդէն հալը հալ չէր: Ահա նա-  
մակը՝

20 Յունիսի 1862. Ս. Պետերբուրգ:

Մեծարու պարոն

Պարոն Ա. Պ. Սալթանյան,

Վստոյ լինելով Ձեր ազգասիրութեան վերայ, Ձեր ար-

պելի անունը լայտարարութեանս մէջ, (որ շնորհ ունիմ Ձեզ ուղարկելու) այլնատաւոր հրատարակեցի Հայաստանի քարտի սպազրութեան, որին ձեռք զարկի, լուսալով միմիայն Ձեր գործակցութեան և ազգի համակրութեան վերայ: Ինչ որ գործի հանգամանքներին է վերաբերվում, որպէս նաև կրկին նպատակին, այդ մասին տեղեկութիւն կրտայ Ձեզ լայտարարութիւնս:

Ուղարկում եմ Ձեզ մի տպեալ 30 տոմսակի տետրակ, սկսած 931 համարից մինչև 960 համարը և խնդրում եմ չը խնայել Ձեր աշխատութիւնը այս ազգօգուտ գործի մասին, ուր իմ անձնակաւոր այնքան է, որքան ամէն մի Հայ-մարդ ունի այս բանում անձնական սգուտ:

Իւրաքանչիւր ստորագրող պարոնի անունը, օրինակների թիւը և գումարի որքանութիւնը Ձեր ձեռքով և Ձեր ստորագրութեամբ կը գրէք տետրակի մէջ, որի աջակողմեան բաժինը կարելով կը տաք ստորագրող պարոններին, որպէս անդորրագիր, իսկ ձախակողմեանը կը թողուք տետրակի մէջ, որով առանց շփոթութեան լայտնի կը լինի ստորագրողի անունը, օրինակի թիւը և գումարի որքանութիւնը:

Ձեր ներկայ եղած քաղաքից դուրս, ուր մենք չենք կարողացել աշխատաւոր մի պարոն նշանակել մեր լայտարարութեան մէջ, եթէ հնար ունիք կարգել մի բարեկամ, այն բարեկամը կրնամքէ ստորագրութիւնք և անունները զրամների հետ միասին կուղարկէ Ձեր լարգութեան, իսկ դուք ստանալով նորանց, կըզգրէք Ձեր մատենի մէջ և իւրաքանչիւր ստորագրող պարոնների համար կուղարկէք տոմսակներ, կանոնի համեմատ:

Եթէ մինչև առաջիկայ Սեպտեմ. 15, ցրված աւարտած լինիք բոլոր Ձեզ լանձնված տոմսակները, այն ժամանակ, տոմսակների մնացորդ մասը, որ կազմում են տետրակի ձախակողմեան բաժինը, հանդերձ սոյն հաշուի մէջ երևեցած արծաթի գումարով կուղարկէք ինձ, իմ հասցեով, որ տպած է լայտարարութեան մէջ: Ես կարգադրութիւն արած եմ, որ Պետերբուրգ ստացվին այն բոլորը, եթէ ես չպատահեմ ևս նորն միջոցին լիչեալ քսղաքում:

Եթէ մինչև նշանակեալ ամսաթիւը բոլոր տոմսակները չլինին բաժանված, այդպիսի դիպուածում, միմիայն մի նամակով տեղեկութիւն կրտաք ինձ, մինչև այն թուականը հաւաքուած ստորագրութեան մասին, նշանակելով ստորագրողների անունները, օրինակների թիւը և հետևաբար գումարի որքանութիւնը:

Ստորագրութեան գինը կանխիկ չստացած իրաւունք չունիք տոմսակ կտրել և տալ ում և իցէ:

Վերստին ազանչելով Ձեզ ժիր հոգաբարձութիւնը, այս

գործի մասին ընդունել իմ անկեղծ լարդութիւնը, որով մնամ միշտ.

Մեծարու պարոնիդ  
անձնանուէր

Միքայէլ Նալբանդեանց.

Այս գրութիւնը լիովին պաշտօնական ձև և բնաւորութիւն ունի, որովհետև Միք. Նալբանդեանցը երբէք բժ. Ա. Սուլթանշահին չէր կարող աղուքով դիմել, քանի որ նրանք միշտ մտերիմ ընկեր-բարեկամներ են եղել: Ինչպէս երևում է Նալբանդեանցը այս ձևով դիմել է շատ-շատերին խնդրելով նրանց աջակցութիւնը իր ձեռնարկած գործին:

Որքան լաւ ծանօթ են մեզ, Հայերիս, Հրատարակիչների այդ կոչը և դիմումը: Թէ 50-ական թէ 60-ական, թէ 70-ական թուականներին և թէ մեր օրերը խեղճ Հայ Հրատարակիչը ստիպուած է իւր բոլոր լուրը դնել ընկեր-բարեկամների վերայ, որոնք բարեկամական խաթրին գտնում են բաժանորդներ, օախիս են աւանսներ, վաճառում են գրքեր, հաւաքում են ապառիկներ: Տարիները անցնում են, շատ բան փոխւում է, բայց Հայերէն գրքեր տարածելու և տարածուելու սիւտեմը մնում է էլի հին նահապետականը: Խեղճ Հայ գրականութիւն, որը պիտի ծաղկի Կիրակոսի կամ Մարկոսի բարեկամական ծառայութիւնների շնորհիւ... նոյն բժ. Սուլթանշահի մօտ ես գտնում եմ և ուրիշ նամակներ Մ. Միանսարեանցի (1872 թ.) որոնցից տեսնում եմ, որ վերջինիս Հրատարակութիւնների տարածողն էլ Ղզլարում նոյնպէս հանգուցեալ բժիշկն էր: Այսպէս՝ նստած Ղզլարում Ա. Սուլթանշահը մի տեսակ կամուրջ էր ներկայացնում ղզլարցիների և դրսից եկած կուլտուրայի ու հայրենասիրութեան միջև: Ամեն քաղաքի մէջ կան այդ տեսակ ինտելիգենտ մարդիկ, որոնք շատ անգամ բան ու գործ թողած դռնէ-դուռն են ընկնում և Հայերէն գրքեր վաճառում: Այդ մարդ-

կանց ծառայութիւնը թէ հայ գրականութեան և թէ հայ հասարակութեան առաջ արժանի է խորին երախտագիտութեան: Հաւատացէք, որ եթէ այդ վամաւոր գրավաճառները չլինին՝ մամուլի տակից դուրս եկած գրքերի կէսը կմնան կամ տպարանում, կամ մի որեւէ գրավաճառանոցում: Զի կարելի չցաւել այդ անօրմալ դրութիւնը տեսնելով, պէտք է վերջապէս մի ուրիշ, աւելի օրինաւոր միջոցներ ձեռք բերել գրքերը տարածելու և մատչելի դարձնելու համար: Արդեօք նպատակալարմար չե՞ լինիլ եթէ Թիֆլիսի գրավաճառներն իրանց մէջ պայմանաւորուեն որոշ քաղաքներում ու գիւղերում գործակալներ պահելու: Այն ժամանակ հրատարակիչը լանձնելով իւր հրատարակութիւնը այս կամ այն գրավաճառին արդէն հանգիստ կըլինի, որ գրավաճառը ինքը կուղարկէ այդ գիրքը իւր և միւս գրավաճառների բոլոր գործակալներին: Դա շատ կըհեշտացնէ հրատարակչի և հեղինակի գործը, որովհետեւ նա հաշիւ կըտեսնի միմիայն մէկի հետ: Այդ ձևը անշուշտ օգուտ կըբերէ և գրավաճառներին, որովհետեւ նրանք կստանան որոշ տոկոս, որը մինչև այժմ չէր ստացուում, որովհետեւ վաճառոււմ էր մասնաւոր բարեկամների միջոցով: Այդ սխտեմից կշահուի և ժողովուրդը, որովհետեւ գործակալների միջոցով կստանայ նոր գրքեր, առանց դիմելու Թիֆլիս, Մոսկուա և կամ այլուր: Վամաւոր գրավաճառները՝ այսօր կան, վաղը չկան, և եթէ մէկը նրանցից մեռնում է, նրան տարիներով փոխարինել չի լինում. մինչդեռ գրավաճառանոցի ներկայացուցիչ հեշտ է գտնել, որովհետեւ այդ պաշտօնը և գործը վարձատրուելու է: Վերցնենք հէնց Ղզլարը. ո՞վ է այժմ բժշկի տեղը բռնողը: Եթէ, օրինակ, Արմաւիր, Մոզդուկ, Ղզլար ուղենաս էլ գրքեր ուղարկելու, չգիտես ո՞ւմ և ո՞ւր դիմես. հայ գրավաճառանոցներ չկան, ծանօթներ կարող են չգտնուել և

մեր նոր հրատարակութիւնները, որքան էլ գեղեցիկ և մտաշելի լինին—չենք կարող մտցնել այդ անսակ քաղաքները: Այսպէս և ուրիշ տեղերում: Իրքեր տարածելու սխտեմի և կազմակերպութեան պակասութիւնը մեր մէջ վաղուց է որ զգացուած է, մամուլի մէջ էլ խօսք է եղել այդ մասին (օրինակ Յ. Տէր Միրաքեանի յօդուածները), բայց մինչև օրս հարցը նոյն կէտի վերայ է մնում:

Միք. Նալբանդեանցի վերոյիշեալ նամակը գրուած է, ինչպէս ասացինք, 1862 թ., Ըստ երևութին Միք. Նալբանդեանցը վերագարձել է արտասահմանից կազդուրուած և լի եռանդով. ծովային ճանապարհորդութիւնը, երևի, լաւ ազդեցութիւն է ունեցել նորա առողջութեան վերայ, որը առհասարակ խանգարուած էր: Կալկաթա գնալուց մի երկու տարի առաջ Նալբանդեանցը ստիպուած էր արտասահմանում լրջօրէն բժշկուելու զանազան բուժավայրերում: Նորա գլխաւոր տկարութիւնը — թոքային էր, որը ի հարկէ պէտք է սաստկանար բանտում, խոնաւ և լուսից զրկուած խցում: Իմ ծնողներս այցելել են Մ. Նալբանդեանցին այդ բանտում և մինչև այժմս չեն կարողանում մոռանալ այն «երնիկը» (երանին), որը լի հառաչանքով տուել է բանտարկեալը... կատուին: «Կատունն ազատ է, նա արեգակի ծառագայթների տակ խաղում է, եւ նրան նախանձում եմ» ասել է խեղճ կալանաւորը: Բանտից գրած և ինձ մօտ այժմ գրտնուած նամակներից երևում է, որ նա բանտը ոտք կոխելու օրից սկսել է ֆիզիկապէս թուլանալ, երևացել են հին հիւանդութիւնները, աւելացել են նորերը: Ասում են, որ Միք. Նալբանդեանցին հանել են բանտից և թող են տուել Կամիշին քաղաքը տեղափոխուելու— հռչակաւոր բժիշկ Բոտկինի միջամտութեան շնորհիւ: Շատ կարելի է, որ այդպէս եղած լինի: Այնուամենայն-

նիւ անկասկած այստեղ էլ բժ. Ա. Սուլթանշահի աջակցութիւնն է հարկաւորուել, որովհետեւ նա տալիս է վկայագիր, որով վաւերացնում է Միք. Նալբանդեանցի ծանր հիւանդ լինելը: Թէ ումն է տուել բժիշկը այդ վկայագիրը, ո՞ր է ներկայացրել, կամ գուցէ չի էլ ներկայացրել, քանի որ Բոսկինը յանձն է առել բարեխօսելու—չգիտենք: Վկայագիրը սրբագրութիւն է և ոչ թէ սևագրութիւն, վաւերացրած է բժ. Սուլթանշահի կնիքով: Բժշկի այդ վկայականը պարզապէս ցոյց է տալիս Միք. Նալբանդեանցի ինչ տեսակ հիւանդ եղածը ուստի ես աւելորդ չեմ համարում բերել այդ թղթի պատճէնը այստեղ:

### СВИДѢТЕЛЬСТВО

Кандидатъ Императорскаго Санктъ Петербургскаго Университета Михайль Налбандовъ въ настоящее время одержимъ слѣдующими болѣзненными состояніями: 1) Хроническимъ сочленовнымъ ревматизмомъ верхнихъ и нижнихъ конечностей (Rheumatismus articularis chronicus extremitat. Superiorum et inferiorum), 2) Хроническимъ воспаленіемъ правой подреберной плевры (Pleuritis chronica), 3) Эмфизематознымъ распривіемъ легкихъ (Emphysema pulmonum), 4) Началомъ отложения бугорковъ въ легкихъ (Tuberculosis incipiens), 5) всеобщимъ катарромъ дыхательныхъ путей (cattarrus chronicus), 6) Гиперемією печени (Hyperegemia hepatis), 7) и наконецъ скорбутомъ (Scorbutus) при полномъ извуреніи организма и большомъ упадѣ силъ. Эти болѣзни требуютъ дѣятельнаго и самаго энергическаго леченія, къ чему и приступлено въ настоящее время. Продолжительность болѣзни неважѣтна, но сомнительное состояніе больного, во всякомъ случаѣ, требуетъ переселенія его на жительство въ теплый климатъ для радикальнаго излеченія,— иначе жизни больного грозитъ неминуемая опасность. Въ удостовѣреніе чего даю это свидѣтельство, за собственнымъ моимъ подписаніемъ и съ приложеніемъ имянной моей печати. 25-го Мая 1865 года. С. Петербургъ.

Вольнопрактикующій врачъ

Ананій Султанъ-Шахъ.

петать

Այս բոլոր հիւանդութիւնները միանալով վաղաժամ գերեզման իջեցրին տաղանդաւոր հրապարակախօ-

սին: Կամիզինից գրած Միք. Նալբանդեանցի նամակնե-  
րից մնացել են միմիայն մի-երկուսը: Բաւականի շատ-  
նամակներ ունեցել է իմ հայրս, բայց վաթսնական  
թուականներին ոչնչացրել է: Այսպէս զուր տեղը կո-  
րել են թանգազին զոկումենտները: Սակայն էլի  
նոյն Յ. և Ղ. Նալբանդեանցների մօտ կան մի քանի  
թղթեր, որոնք կարող են հետաքրքրական տեղեկու-  
թիւններ տալ Միք. Նալբանդեանի կեանքի վերջին  
տարիների և օրերի մասին: Անշուշտ նորա կենսագրու-  
թեան համար մեծ նշանակութիւն ունի և այն հարցը  
թէ Միք. Նալբանդեանը ինչ գրքեր էր կարդում և ինչ-  
պէս էր կարդում, որ բանով հետաքրքրում: Նոյն  
ժառանգների մօտ գտնուում են Մ. Նալբանդեանջի  
գրքերը իւր ծանօթութիւններով լուսանցքների վերայ:  
Առ այժմ վերջացնում եմ սրանով, յոյս ունենալով  
զեռ քանիցս վերադառնալու Միք. Նալբանդեանցի կեն-  
սագրութեանը, գրուածքներին և նամակներին յատկապէս:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐՆԱՆ

